

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2021 թվականի մարտի 30-ի N 3 - L**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 3) և 5) ենթակետերով, և քննարկելով համալսարանի 2021-2022 ուսումնական տարվա մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի (առկա և հեռակա համակարգ) մասնագիտությունների, քննությունների, տեղերի և ուսման վարձերի, ինչպես նաև նախապատրաստական բաժնի ուսման վարձերի հարցը (գեկուցող՝ պրոֆեսոր Մ. Մելիք-Բախշյան)՝

**Համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.**

1. Հաստատել համալսարանի.

ա/ 2021-2022 ուսումնական տարվա մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի (առկա և հեռակա համակարգ) մասնագիտությունները, ընդունելության քննությունները, տեղերն և ուսման վարձերը՝ համաձայն հավելված 1-ի,

բ/ 2021-2022 ուսումնական տարվա նախապատրաստական բաժնի ուսման վարձերը ըստ մասնագիտությունների՝ համաձայն հավելված 2-ի,

գ/ 031301.05.7 <<Կառավարման հոգեբանություն>> և 031301.15.7 <<Ճգնաժամային հոգեբանություն և միջամտություն>> մագիստրոսական կրթական ծրագրերի մասնագրերը:

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**